

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

# **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,  
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

## **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION  
DEDICATED TO THE 95<sup>TH</sup> ANNIVERSARY OF YSU*

**1.7 (10)**

*Общественные науки - Social sciences*

*(Социология, экономика, философия, психология, журналистика)  
(Sociology, Economics, Philosophy, Psychology, Journalism)*

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ**

## 1.7 (10)

**Հասարակական գիտություններ  
(Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, փիլիսոփայություն,  
հոգեբանություն, ժուռնալիստիկա)**

**Հրատարակվում է**  
**ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

***Խմբագրական խորհուրդ՝***

փ. գ. դ., պրոֆ. Ա. Սկրտիչյան  
տ. գ. դ., պրոֆ. Մ. Միքայելյան  
տ. գ. դ., պրոֆ. Ս. Դանթարջյան  
տ. գ. դ., պրոֆ. Թ. Թորոսյան  
տ. գ. դ., պրոֆ. Ա. Առաքելյան  
փ. գ. դ., պրոֆ. Է. Հարությունյան  
փ. գ. դ., պրոֆ. Ս. Չաքարյան  
հ. գ. դ., պրոֆ. Յ. Ավանեսյան

բ. գ. դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ. գ. դ., պրոֆ. Մ. Հովսեփյան  
տ. գ. դ., դոց. Յ. Մնացականյան  
ս. գ. թ., դոց. Ն. Մելքոնյան  
փ. գ. թ., դոց. Ա. Խաչատրյան  
փ. գ. թ., դոց. Յ. Հովհաննիսյան  
հ. գ. թ., դոց. Վ. Միքայելյան  
հ. գ. թ., դոց. Ն. Խաչատրյան

***Редакционная коллегия:***

ժ. ֆ. ն., պրոֆ. Ա. Մկրտիչյան  
ժ. է. ն., պրոֆ. Մ. Միքայելյան  
ժ. է. ն., պրոֆ. Ս. Գանտարջյան  
ժ. է. ն., պրոֆ. Թ. Թորոսյան  
ժ. տ. ն., պրոֆ. Ա. Արակելյան  
ժ. ֆ. ն., պրոֆ. Յ. Արությունյան  
ժ. ֆ. ն., պրոֆ. Ս. Հակարյան  
ժ. ֆ. ն., պրոֆ. Գ. Ավանեսյան

ժ. ֆ. ն., պրոֆ. Դ. Պետրոսյան  
ժ. ֆ. ն., պրոֆ. Մ. Օվսեպյան  
ժ. է. ն., ժոց. Ա. Մնացականյան  
կ. ս. ն., ժոց. Ն. Մելկոնյան  
կ. ֆ. ն., ժոց. Ա. Խաչատրյան  
կ. ֆ. ն., ժոց. Օ. Օվաննիսյան  
կ. ֆ. ն., ժոց. Վ. Միքայելյան  
կ. ֆ. ն., ժոց. Ն. Խաչատրյան

***Editorial Board***

DSc, prof. A. Mkrtichyan  
DSc, prof. M. Mikayelyan  
DSc, prof. S. Ghantarjyan  
DSc, prof. T. Torosyan  
DSc, prof. A. Arakelyan  
DSc, prof. E. Harutyunyan  
DSc, prof. S. Zakaryan  
DSc, prof. H. Avanesyan

DSc, prof. D. Petrosyan  
DSc, prof. M. Hovsepyan  
DSc, associate prof. H. Mnatsakanyan  
PhD, associate prof. N. Melkonyan  
PhD, associate prof. A. Khachatryan  
PhD, associate prof. H. Hovhannisyanyan  
PhD, associate prof. V. Mikayelyan  
PhD, associate prof. N. Khachatryan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ **Ս. Սալխայան**

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am  
Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական  
գիտական ընկերություն  
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspub@ysu.am, sss@ysu.am  
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.y-su.am

## Հասմիկ Մելիքետյան

ԵՊՀ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, բակալավրիատի ուսանող  
Գիտ. դեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
Էլ. փոստ՝ [hasmikmeliqsetyan@yahoo.com](mailto:hasmikmeliqsetyan@yahoo.com)

### ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱՆՏՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԴԱՇՏՈՒՄ

1994 թ. մայիսի 12-ին ՀՀ պաշտպանության նախարարը, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարն ու Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարը ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր, որով կողմերը համաձայնեցին հետևյալի մասին. «Ապահովել կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցումը՝ սկսած 1994 թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Մինչև ոչ ուշ, քան 1994 թ. մայիսի 11-ը հրադադարի մասին համապատասխան հրամանները կտրվեն և կհաղորդվեն ռազմական ստորաբաժանումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրանց իրականացման համար: Մայիսի 12-ին՝ մինչև ժամը 23.00, կողմերը կփոխանակեն հրադադարի մասին իրենց հրամանների տեքստերը՝ դրանց հնարավոր փոխադարձ լրացման և հետագայում համանման փաստաթղթերի հիմնական դրույթների ներդաշնակեցման նպատակով»<sup>1</sup>:

Չինադադարի ստորագրումից անցել է 20 տարի, իսկ պայմանագրի առաջին ու ամենակարևոր կետն այդպես էլ անկատար է մնացել:

Սույն աշխատանքով ներկայացնում ենք, թե տարվա ընթացքում հատկապես որ շրջաններում է ակտիվանում հակառակորդը, և ինչպես է այդ ակտիվությունը լուսաբանվում հայկական լրատվադաշտում:

Ուսումնասիրելով հրադադարի խախտման մասին մի քանի տարվա պաշտոնական (ՀՀ Չինված ուժերի և ԼՂՀ Պաշտպանության բանակի) տվյալները՝ պատկերն այսպիսին է.

- 2010 թ.՝ 7450 կրակոց,
- 2011 թ.՝ 12619 կրակոց,
- 2012 թ.՝ 15232 կրակոց,
- 2013 թ.՝ 12739 կրակոց<sup>2</sup>:

Ինչո՞վ է պայմանավորված հակառակորդի ակտիվությունը: Ըստ մեր մշտադիտարկման արդյունքների՝ հակառակորդը հրադադարն ինտենսիվորեն խախտում է տարվա ընթացքում հատկապես նախանշված օրերին, օրինակ՝

- ✓ Սև հունվար կամ Արյունոտ հունվար (ադր.՝ *Qara Yanvar*, 1990 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը խորհրդային բանակը ներխուժեց Բաքու, որի հետևանքով մահացան հարյուրավոր մարդիկ),
- ✓ Հունվարի 28՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման օր,
- ✓ Փետրվարի 25-26՝ Խոջալուի դեպքեր, որոնք ադրբեջանական կողմը փորձում է աշխարհին ներկայացնել իբրև «ցեղասպանություն»,
- ✓ Փետրվարի 27՝ Սումգայիթի ջարդեր,
- ✓ Մայիսի 9 և 12՝ Շուշիի ազատագրում և հրադադարի հաստատման համաձայնագիր,
- ✓ Սեպտեմբերի 2 և 21՝ Արցախի և ՀՀ Անկախության օրեր,

<sup>1</sup> Տե՛ս ԼՂՀ պաշտոնական կայք՝ <http://www.nkr.am/hy/ceasefire-agreement/147/>:

<sup>2</sup> Տե՛ս «Երկիր Դեյլի» կայքի ինֆոգրաֆիկան՝ <http://www.yerkir.am/am/news/57632.htm>:

- ✓ Ամանոր,
- ✓ Հայաստանի գինված ուժերում տարվա մեջ երկու անգամ զարնանային և աշնանային զորակոչի-զորացրման ժամանակահատված,
- ✓ Գարնանային ինժեներական աշխատանքներ կատարելու շրջան,
- ✓ ՀՀ և ԱՀ արտաքին գործերի նախարարների հանդիպումներ,
- ✓ ՀՀ նախագահի այցելություն սահմանամերձ շրջաններ,
- ✓ Ադրբեջանի ներքին քաղաքականություն, մասնավորապես՝ 2013-2014 թթ. պաշտպանական համակարգում կադրային փոփոխություններ (պաշտպանության նախարարի՝ Չաֆիր Հասանովի նշանակումը և դրան հաջորդող մյուս փոփոխությունները):

Այժմ ներկայացնում ենք, թե ինչպես են այս իրադարձությունները մեկնաբանվում հայկական մամուլում:

2014 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը Արցախում հայ-ադրբեջանական զորքերի շփման գծի հյուսիսարևելյան (Ջրաբերդ) և հարավարևելյան (Կորգան) ուղղություններում հակառակորդի դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր եղան: Չոհվեց կրտսեր սերժանտ Արմեն Լևոնի Հովհաննիսյանը: Դրանից հետո սահմանի ամբողջ երկայնքով լարվածությունն ավելի ուժգնացավ, իսկ որոշ «փորձագետներ» սկսեցին կանխագուշակել լայնամասշտաբ մարտական գործողությունների վերսկսում: Հունվարի 20-ին հայկական կողմը հայտարարեց, որ հունվարի 19-ի դիվերսիան անպատասխան չի մնա: Հաջորդ օրը ադրբեջանական կայքերով, այդ թվում՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարության պաշտոնական կայքով հայտարարվեց, որ հայկական կողմը նախահարձակ է եղել:

«Ադրբեջանի ՊՆ հայտարարությունը, թե իբր մենք ենք նախահարձակ եղել, հերթական ապատեղեկատվությունն է: Հակառակորդի ստորաբաժանումները տասն անգամ ավելի ինտենսիվորեն կրակել են երեկ գիշերը՝ խախտելով հրադադարի ռեժիմը: Մենք երեկ խոստացել էինք համապատասխան ձևով պատասխանել հունվարի 19-ի դիվերսիային, քաջատեղյակ լինելով դրան՝ վախեցած կրակել են ամբողջ գիշեր առաջնագծի ողջ երկայնքով: Մեր ստորաբաժանումների պատասխան կրակի արդյունքում հակառակորդը լռել է, մենք զոհեր ու տուժածներ չունենք»<sup>1</sup>, - ի պատասխան ադրբեջանական կայքերի կեղծ տեղեկատվության, հայտարարել է ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը:

Հավելենք, որ, ըստ Պաշտպանության բանակի օպերատիվ տվյալների, հունվարի 12-ից 18-ն ընկած ժամանակահատվածում հայ-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմը խախտվել է շուրջ 150 անգամ, որի ընթացքում տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից հայ դիրքապահների ուղղությամբ արձակվել է ավելի քան 800 կրակոց<sup>2</sup>:

Համեմատելով այս թվերը միայն հունվարի 20-ի մասին հրապարակված թվերի հետ՝ ստացվում է հետևյալ պատկերը. 1 շաբաթվա ընթացքում՝ ավելի քան 800 կրակոց, 1 օրվա ընթացքում՝ ավելի քան 2000 կրակոց<sup>3</sup>:

Այսպիսով, հակառակորդը «սև հունվարի»-ի ընթացքում էականորեն ակտիվանում է, խախտում հրադադարի ռեժիմը, որի արդյունքում դժբախտաբար հայկական կողմը մարտական զոհ(եր) է ունենում: Ըստ այդմ՝ հունվարի 19-ի ադրբեջանական դիվերսիոն գործողությանը փաստացիորեն հունվարի 20-ին հետևում է ինտենսիվ կրակն առաջնագծի ողջ երկայնքով, ընդ որում՝ ադրբեջանական կողմի նախահարձակ լինե-

<sup>1</sup> Տե՛ս «Ռազմինֆո» ռազմական լրատվական կայքի հրապարակումը՝ <http://razm.info/29642>:

<sup>2</sup> Տե՛ս Պաշտպանության բանակի մամուլի ծառայության (այսուհետ՝ ՊԲ ՄԾ) հրապարակումը՝ <http://nkrmil.am/main/am/newsMore650.html>:

<sup>3</sup> Տե՛ս ՊԲ ՄԾ հրապարակումը՝ <http://nkrmil.am/main/am/newsMore653.html>:

լու պայմաններում: Այս հանգամանքը հերթական անգամ փաստում է, որ Ադրբեջանում պաշտպանության նոր նախարարի նշանակումը չի ազդել ընդհանուր իրավիճակի վրա. Ադրբեջանը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր որդեգրած քաղաքականությունը, իսկ Ադրբեջանի նախագահի ու բարձրաստիճան պաշտոնյաների՝ վերջին շրջանում հաճախ հնչող Արցախյան հիմնախնդրին խաղաղ լուծում տալու կոչերը զուտ հերթական քարոզչական քայլերն են:

Ընդամենը 1 օր անց, երբ դեռ սահմանին իրավիճակը բավականին լարված էր, հակառակորդը սկսում է ինտենսիվորեն կրակել նաև հայ-ադրբեջանական սահմանի՝ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի ուղղությամբ:

Հայկական լրատվական մի շարք կայքեր, մասնավորապես՝ news.am-ը, երեկոյան սկսում է լուրեր տարածել հետևյալ վերնագրով. «Ադրբեջանական կողմը կրակում է Այգեպար և Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի ուղղությամբ. բնակիչներին տարհանել են»: Բովանդակությունն այսպիսին է. «Ադրբեջանական կողմը մոտ 1 ժամ առաջ կրակ է բացել Տավուշի մարզի սահմանամերձ Այգեպար և Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի ուղղությամբ. գյուղացիներին տարհանել են իրենց տներից, և այժմ նրանք գտնվում են հատուկ կացարաններում: Այս մասին NEWS.am-ին հայտնեցին Այգեպարի բնակիչները, որոնց սարսափեցրել են այդքան մեծ քանակությամբ կրակոցները»<sup>1</sup>:

Ինչ-որ ընդհանրական գնահատական տալով՝ լրատվամիջոցը ապատեղեկատվություն է տարածում: Հրադադարի հաստատումից հետո հրադադարի խախտումների դեպքում հայկական ոչ մի գյուղից բնակչությունը երբեք չի տարհանվել և չի տեղափոխվել որևէ «հատուկ կացարան»: Ինչ է նշանակում «այս մասին հայտնեցին այգեպարի բնակիչները», երբ մի շարք այլ լրատվամիջոցներ ստիպված եղան կեսգիշերին հերքել մի լրատվամիջոցի անպատասխանատու հայտարարությունը: Հետաքրքիրն այն է, որ լրատվամիջոցը, շատ լավ հասկանալով, որ վաղ թե ուշ բացահայտվելու է իր ապատեղեկատվությունը, մեկ ժամվա մեջ փոխում է իր նյութի վերնագիրը՝ դարձնելով **«Ադրբեջանական կողմը կրակում է Այգեպար եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի ուղղությամբ»**: Ավելին, կայքը խմբագրում է նաև նյութի տեքստը՝ հանելով ապատեղեկատվություն պարունակող հատվածները:

«Ադրբեջանական կողմը մոտ 1 ժամ առաջ կրակ է բացել Տավուշի մարզի սահմանամերձ Այգեպար և Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի ուղղությամբ. գյուղացիներին տարհանել են իրենց տներից և այժմ նրանք գտնվում են հատուկ կացարաններում: Այս մասին NEWS.am-ին հայտնեցին Այգեպարի բնակիչները»: Խմբագրված հատվածում այլևս չկա «որոնց սարսափեցրել են այդքան մեծ քանակությամբ կրակոցները» նախադասությունը: Միգուցե մեկ ժամվա ընթացքում այլևս նրանց չի սարսափեցրել, դրա համար էլ կայքը որոշել է խմբագրել:

Ստացվում է, որ հայկական լրատվական որոշ կայքեր ապատեղեկատվություն են տարածում հայ հասարակության շրջանում և ավելացնում հունվարի 19-ից սկսված լարվածությունն ու վախը: Ադրբեջանական կողմը հանգիստ օգտագործում է այս փաստն ու ներկայացնում, որ իբր «հայերը լքում են իրենց տները, որ իրենց զինված ուժերը չեն կարողանում պաշտպանել իրենց, որ Ադրբեջանը շատ հզոր է» և այլն:

Հայտնի է, որ մարդիկ հակված են ավելի շատ հավատալու նախնական տեղեկատվությանը, քան հետո տրվող պարզաբանումներին: Երբ տրվում է ճշգրիտ տեղեկատվություն, որ ոչ ոքի չեն տարհանել, և իրավիճակը վերահսկվում է հայկական զինված ուժերի կողմից, հանրության մեծամասնությունը մտածում է, որ դա արվում է լարված մթնոլորտը թուլացնելու, ինչպես նաև ուշադրություն շեղելու համար: Այս իսկ պատճառով նման աշխատառճը սպառնալիք է մեր ազգային անվտանգությանը, քա-

<sup>1</sup> Տե՛ս <http://news.am/arm/news/190568.html>:

նի որ ճգնաժամային իրավիճակում չկա երաշխիք, որ կեղծ տեղեկատվությունն իրական վնաս չի տա, կատեղծի խուճապ՝ հարվածելով առաջին հերթին սահմանին կանգնած զինծառայողին և սահմանապահ գյուղի բնակչին:

Մեկ այլ օրինակ. հակառակորդը կրկին խախտեց հրադադարի ռեժիմը հունվարի 28-ին, որի պատճառով Արցախում հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հակառակորդի դիպուկահարի գնդակից զոհվեց Կարեն Գալստյանը:

Անդրադառնանք ևս մեկ կարևոր կետի, թե ինչպես 2013 թ. հոկտեմբերի 22-ին և դրանից հետո հակառակորդը որոշեց «նվեր մատուցել» Ադրբեջանի պաշտպանության նորանշանակ նախարարին: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հրամանագրով երկրի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևին փոխարինեց Չաֆիր Աքբեր օղլու Յասանովը: Մինևույն ժամանակ Ի. Ալիևի հրամանագրով Չ. Յասանովը ստացավ գեներալ-գնդապետի զինվորական կոչում<sup>1</sup>: Նույն օրը՝ հոկտեմբերի 22-ին՝ ժամը 13-14-ի սահմաններում, ՀՀ Տավուշի մարզում Բերդ-Իջևան ավտոճանապարհի Պառավաքարի հատվածում, զինծառայողներին մարտական հերթապահության տեղափոխող զինվորական մեքենաների շարասյան վրա բացված կրակի հետևանքով զոհվեց ժամկետային զինծառայող, շարքային Գարիկ Պողոսյանը<sup>2</sup>: Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ ստացան ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Արթուր Անդրանիկյանը, Արայիկ Ժամհարյանը և Մարտին Պետրոսյանը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ հակառակորդի այս հանցավոր քայլն անպատասխան չի մնա, և հերթական անգամ սադրանքի պատասխանատվությունը կմսա սանձազերծողի վրա:

Ամփոփելով նշենք, որ կնքված հրադադարն ամեն պահի կարող է փոխարինվել մարտական գործողություններով: Չլուսաբանել միջադեպերը չի կարելի, քանի որ հակառակ դեպքում խաղաղության պատրանքը քնեցնելու հատկություն ունի, ինչը հայ հասարակության համար պակաս վտանգավոր չէ, քան հոգեբանական անընդհատ ճնշումը: Հայկական լրատվադաշտում գործող ռազմավերլուծական «Ռազմինֆո» կայքը վերլուծական մի նյութ ունի, որտեղ հրադադարի խախտումը համարվում է հոգեբանական գործողություն. «Հաճախակի հրաձգությունը մեր զինծառայողներին պահում է անընդհատ լարված վիճակում (որին զումարվում է դիրքերում հերթապահության ծանր ռեժիմը), ինչն էլ իր հերթին մեծացնում է զանազան միջադեպերի ու դժբախտ պատահարների հավանականությունը, որոնց հետևանքով ոչ մարտական կորուստներ կարող են լինել»<sup>3</sup>:

Ադրբեջանական կողմը շատ լավ հասկանում է, որ դիրքերում հրաձգության կամ ողբերգական միջադեպերի մասին հայկական լրատվամիջոցներով մշտապես հաղորդվող լուրերը հոգեբանական ճնշման տակ են պահում հայկական լսարանը: Ամեն այդպիսի հաղորդագրություն մտահոգության, սթրեսի, երբեմն նույնիսկ խուճապային տրամադրությունների աղբյուր է դառնում ապագա զորակոչիկների և պարտադիր զինծառայություն անցնող երիտասարդների ազգականների համար: Իսկ սահմանամերձ գյուղերում մշտապես հնչող կրակոցներից գատ բնակիչներին թևաթափ են առնում մայրաքաղաքից հնչող անհիմն դատողություններն ու ապատեղեկատվությունը՝ իբրև թե իրենք թողնում են գյուղերը կամ իրենց տները: Պատերազմող երկրի համար պատրաստված ու գրագետ լրատվադաշտ ունենալն ինչ-որ տեղ չի զիջում նաև հզոր բանակին, քանի որ իրական պատերազմում հաղթելու կարևոր գրավականներից մեկը նաև տեղեկատվական պատերազմում հաղթելն է:

<sup>1</sup> Տե՛ս <http://razm.info/23478>:

<sup>2</sup> Տե՛ս <http://razm.info/23432>:

<sup>3</sup> Տե՛ս <http://razm.info/5475>:

Հասմիկ Մելիքսեթյան

**ԵՐԲ Ե ԱԿՏԻՎԱՆՈՒՄ ՀԱՎԱՌԱԿՈՐԴ. ՀՐԱՂԱՂԱՐԻ ԽԱԽՏԱՆ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՐԱՇՏՈՒՄ**

*Բանալի բառեր՝ Հայաստան, Ադրբեջան, հրադադարի խախտում,  
հայ-ադրբեջանական սահման, առաջնագիծ*

Հոդվածում ներկայացվում է, թե զինադադարի հաստատումից 20 տարի անց ինչպես է խախտվում հրադադարի ռեժիմը, հատկապես որ օրերին և ինչի հետ կապված է շփման գծում ակտիվանում հակառակորդը: Անդրադարձ է կատարվում նաև հրադադարի ռեժիմի խախտման լուսաբանմանը, թե ինչպես այն կարող է հոգեբանական ազդեցություն ունենալ հասարակության, մասնավորապես՝ սահմանամերձ գյուղերի բնակիչների վրա:

Асмик Меликсетян

**КОГДА ВРАГ АКТИВИЗИРУЕТСЯ: ОСВЕЩЕНИЕ НАРУШЕНИЯ  
РЕЖИМА ПРЕКРАЩЕНИЯ ОГНЯ В АРМЯНСКИХ СМИ**

*Ключевые слова: Армения, Азербайджан, перемирие, Армяно-азербайджанская граница, линия фронта*

В статье представлены факты, как через 20 лет после подписания договора о прекращении огня нарушается перемирие, в какие дни активизируется враг и с чем это связано. Также мы обратились к вопросу освещения нарушения режима прекращения огня в СМИ и как это может психологически повлиять на общественность, в частности, на жителей приграничных сел.

Hasmik Meliksetyan

**WHEN THE ENEMY BECOMES ACTIVE. THE COVERAGE OF  
CEASEFIRE VIOLATION IN ARMENIAN MEDIA**

*Keywords: Armenia, Azerbaijan, ceasefire, Armenian-Azerbaijani border, frontline*

The current article presents how the ceasefire is violated after 20 years it was announced, especially the days when the enemy is active and the reasons for such behavior. This report also illustrates the psychological impact of the ceasefire regime violation on the society, particularly on residents of frontier villages.